

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆՈՒԹԻՒՆԵՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով.

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Մարտի 1-ից մինչև տարվայ վերջը կարժեհայ իՆՆ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև մարտի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղօրօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՆԵՐ

Պատերազմի շուրջը.— ԵՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Զիբարայէլից. Նամակ Ստալիբոյից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ բողոքականները Թիւրքիայում.— ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Անցեալէն և ներկայէն:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐԺԸ

Նապօնացիներ վաղուց պատրաստվում էին: Այն փաստը, թէ եապօնացիները վաղուց պատրաստվում էին պատերազմի Ռուսաստանի հետ, հաստատութիւն գտաւ նորերս Պետերբուրգի եապօնական դեսպան պ. Կուրիֆի վրէպալովի մօտ: Շվեդական «Գազէն» լրագրի թղթակցին ահա ինչ է հաղորդել դեսպանը.

«Պատրաստվում էինք մենք պատերազմի, իհարկէ, այո. բայց բացի վերջին անգամ գնած կրէյտէններից, մենք ոչ մի արտակարգ պատրաստութիւններ չէինք տեսնում մինչև վերջին քաղցնը: Յամենայն դէպս, պատերազմի առաջն անհետ ամենալու միջոցը՝ միշտ կուրի մամար պատրաստ և կազմ լինին է: Եւ եւ կարող եմ ասել, որ մենք ամեն բան արինք, ինչ հնարաւոր էր, խաղաղութիւնը պահպանելու համար:»

Ապա դեսպանը կարծէք յայտնեց, որ Ռուսաստանը Նապօնայի համար չէ կարող լուրջ հակառակորդ լինել ծովի վրա: Ինչ վերաբերում է գործողութիւններին ցամաքի վրա, այդտեղ էլ դեռ շատ ժամանակ կը տևի, մինչև որ Ռուսաց զօրքը կարող կը լինի նշանաւոր աշդողութիւն ձեռք բերել:

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԱՆՅԵԱԼԷՆ ԵՆ ՆԵՐԿԱՑԷՆ

Վտանգաւոր ապագան.— Հայ պաշտօնէութեան անցեալը ու ներկան.— Հայ բժշկութիւնը:

Վեներաբլի, 21 փետրուար

Նախորդ թղթակցութեամբ մը մեր՝ Արեւմտեան հայոցս՝ կը թակաւ խնդիրներուն վրա խօսեցայ: Նպատակս այն չէր որ «Մշակ»-ին ընթերցողներուն միտքը մանկավարժական հարցերով զբաղեցնեմ: Ո՛չ, պիտի ջանամ հանրային ուշադրութիւնը հրաւերել այն բանի վրա, որ մենք մեծամեծ կորուստներ պիտի կրենք, վասն զի մտքով շատ յետամնաց ենք ուրիշ ազգերէ, որոնք մեզի կը շրջապատեն, որոնց հետ խառն կ'ապրինք:

Այս օրուան համար նկատողութեան անհնար թիւրքերից ծառայութեան մէջ գտնուող հայ պաշտօնէից տկարացումը և անոնց թիւին օրէ օր նուազումը, որ անհետացման պիտի յանգի: Այս չբացումը թող մեզի չուրախացնէ: Իրաւ է թէ ունեցած ենք բարձրատեսիլ քանի մը հայ պաշտօնատարներ, որոնք ցեղին շահերը զոհած են անձնական շահերու. բայց միթէ չենք ունեցած, օրինակ, եկեղեցականներ ալ, որոնք դաւադրած են ազգին դէմ. պարագայ մը որուն ընական հետեանքը մեր եկեղեցականութեան ջնջման կամ տկարացման փափագը պիտի չըլլայ:

Հայ պաշտօնէից բազմացումը և հզօրացումը

— Ընդհ. է այն լուրը, հարցրեց թղթակցը, որ իբրեւ հայտնական էսկադրան մտադիր է մանկի Բալթիկ ծովը ռուսաց նաւահանգիստները ուժակոծելու համար:

Դեսպանը վճռապէս հերքեց այդ լուրը, աւելով, որ Եապօնայում երբէք դրա մասին չեն էլ մտածել:

— Մեր պատերազմական բեռը՝ Արեւելքն է և մեր օգուտը չէ ընդարձակել նրան աշխարհի ուրիշ տեղերում:

— Իսկ եթէ միջամտեն եւրոպական պետութիւնները:

— Ներկայ պայմաններում, ես ապահով եմ, որ այդ տեղի չի ունենայ: Մենք այդ չենք ցանկանում: Մենք կամենում ենք կուռել Ռուսաստանի հետ միայնակ, երես առ երես:

— Ասում են, որ իբր գերմանական կառավարութիւնը հաժմարում է Ռուսաստանին և պատրաստ է միջամտել, հարկաւոր դէպքում: Չէ՞ր լսել որ և բան այդ մասին Բերլինում:

— Ոչինչ չեմ լսել այդ մասին, պատասխանեց դեսպանը:

Աղմկալոյզ լուրեր են արածվում: Չէ հասկացվում, թէ ինչ շարժառիթներից ստիպված, մի բանի եւրոպական լրագիրներ աշխատում են աւելի ևս լցնել միջուկորդ էլէքտրական կայծերով, որոնցով նա արդէն չափազանց ծանրաբեռնված է և պատրաստ է ամեն բովէ պայթիլ: «Königsberger Zeitung» գերմանական լրագիրը հրատարակել է մի հեռագիր, իբր Պօրտ-Արտուրից ստացված, թէ Տօկիոյում տեղեկութիւն է ստացվել, որ Մէլուում եապօնական դեսպանը դիմել է կորէական կառավարութեան՝ առաջարկելով վերադարձնել Փրանսիական դեսպանին նրա հաւատարմութիւնը: Դժուար թէ Եապօնիան այդպիսի յանդուգն քայլ անէր: Նոյն լրագիրը հաղորդում է նաև, որ Պէշվարից հեռագրի է ստացվել, թէ Գաբուլից ստացված տեղեկութիւնների համաձայն, ռուսական էմիսանները կործանել են թուրքաստան-աւղանիստ սահմանի վրա սահմանադիպային սիւները:

Զինացիներն հազվում են եապօնացիների կողմը: Բերլինից հեռագրում են, որ չինացիները սկսել են եապօնասիրութիւն: Գնեհալ Չին ուրիշների հետ միասին բողոքում է Չինաստանի չէզոքութեան դէմ, պնդելով, որ դաշնակցութիւն կապվի Եապօնայի հետ և Չինաստանը ներգործական դեր խաղայ: Դեր-

շատ մը առաւելութիւններ կ'ունայ ընծայել մեզի: Պատճառները խիստ պարզ են: Երբ Աղաթօն մը, Օտան մը, Տառնան մը, Յակոբ փաշա մը, Փորթուղալ փաշա մը մեծ պետութիւններ կառավարելու իրենց կարողութիւնը ցոյց կուտան, անոնք միանգամայն հաւաստած կ'ըլլան իրենց ցեղին վարչական յատկութիւնները:

Հայերը թէև թիւրքերի մէջ միշտ ազդեցիկ եղած են, բայց մինչև անցեալ դարուն առաջին կեսը ոչ բարձր տիւրքներ կրած են և ոչ ալ իսլամին համահաւասար պաշտօնական ձայն ունեցած են երկրին գերագոյն վարչութեանը մէջ: Պէզնեան ամիրա մը թէև կայսրութեան ամենամեծ ծառայութիւններ կը մատուցանէ ու սուլթան Մահմուտ իր դիմաւորը ձեռքովը անոր կուրծքէն կը կախէ, բայց ամիրան միշտ չազն է Արթին կը մնայ: Գրիստոնէին բարձրացումը կը սկսի այն օրը, երբ իսլամը կը գտնուի հանդէպ նոր կացութեան մը, որուն համար նախապատրաստուած չէ: Եւրոպայի ու թիւրքերի միջև սերտ յարաբերութիւններուն սկզբնաւորութեան պահուն, մահմէդականը պատերազմող մարդ՝ եւրոպացիին հետ վարուելու միջոցներէն զուրկ կը մնար: Ֆրանսերէնի բաշտակող ու զարգացած քանի մը թիւրքերը հազիւ թէ կը բաւէին մեծ պաշտօններու: Եւրոպայի հետ յարաբերութեանը քիչ շատ բարեփոխելու հարկը, զգացնել տուին, թէ քրիստոնէին աշխկցութիւնը փնտռելու էր: Սուլթանին հպատակ ըրիստոնէաց բոլոր ցեղերուն մէջէն հայը յարմարագոյնը կը ներկայանար զոհանքներու համար նոր ստեղծուած կացութեան պէտքերը, ուստի և հայը կարճ ժամա-

մանական դիպլոմատների կարծիքով, դա առաջ կը բերէ եւրոպական պետութիւնների միջամտութիւնը. զբանով և բացատրում են անգլիական նաւատորմի զենքի կանչվելը:

Կօրեում հաստատվել է փոխարհայութիւն: Եապօնացիները, զբաւելով Կօրէան, հաստատուել են փոխարհայութիւն մինիստր-նախագահ Սէուլում նշանակված է Տօկուգավա, փոխ-նախագահ՝ Կատո: Կատոն արդէն մի երկու շաբաթ է տեղափոխվել է կայսերական պալատը, որպէս զի թոյլ չը տայ կօրէական կայսրին փախչել Փրանսիական զինուորական նաւով: Կօրէական կայսրի յարաբերութիւնները զենքի Եապօնիան այնպէս էլ լաւ չեն, ինչպէս աշխատում են ցոյց տալ եապօնացիները: Ռուսաց դեսպանը Վաշինգտոնում տեղեկացրել է ամերիկական արտաքին գործերի մինիստր Գիլին, որ Ռուսաստանը չէ ձանաչում եապօնա-կօրէական դաշնագրը, որ իբր երաշխաւորում է Կօրէայի անկախութիւնը, որովհետև Կօրէան ստիպված է կապել այդ դաշնագրի:

Դարձեալ սարսափ Պարիզի բօսայում: Սարսափը Պարիզի բօսայում շարունակվում է. Փրանսիական արժէթղթերի գները զահաւէժ կերպով ընկնում են. նոյն իսկ «Գօրէյի-Լաօնի» ակցիան իջել է 70 ֆրանկ: Դեռ երբէք Փրանսիայում արժէթղթերի կուրսի այդպիսի անկումն չէ եղել: Հաշվում են, որ Փրանսիական բանտիները մի բանի ժամում կորցրին օտո 950 միլիոն ֆրանկ: Այդ սարսափի զլխաւոր պատճառը սպէկուլացիան է, բայց նրանք ընչ էլ օգնում և այժմեան միջազգային դրութիւնը, որ շատ թուլացել է և կոռուտված է: Ամեն տեղ, ամեն մի երկրում տեսնվում արաւոթեամբ միջոցներ են ձեռք առնում, որ յանկարծակի չը դան: Ամերիկը վախենում են ընդհանուր եւրոպական պատերազմից: Լրագիրները կրակի վրա աւելի ևս իւր են ածում: Եթէ հաւատանք նրանց, Ամերիկան և Անգլիան մտածում են ձեռք կարկառել Եապօնիային. գերմանացիները ուրիշ մտածողութիւն չունեն, եթէ ոչ առանձնացնել Փրանսիային, որ հնչող կարելի լինի կրանի նրան. Մեծաւոր Ամերիկում, այսօր-վաղը, կը բռնկվի պատերազմ: Մի բան միայն երկուց է ազդում լըջօրէն, այդ՝ Զինաստանի բռնկելը գերբն է. եթէ նա չէզոքութիւն չը պահպանէ, անկասկած, այն

նախամիջոցի մը մէջ մեծկակ տեղ մը գրաւելը իբր վարչագէտ պաշտօնեայ, ու իր խելովը և բարոյականովը նշանաւոր ծառայութիւններ մատուց:

Բոլոր թիւրք նախարարները իրենց մտերիմ խորհրդական հայեր ունէին. և այդ հայերը երկրին վարչներուն վրայ իրենց ունեցած ազդեցութեամբ, նաև ազդեցիկ կընէին իրենց ազգը միջազգային բաղադրականութեան մէջ: Այսպէս Օտան մը Միդհան փաշային մտերիմ խորհրդատուն էր, և դեսպանական շրջանակները գիտէին թէ այդ հայուն հետ գործ պէտք է ունենան թիւրքերի վրայ ազդելու համար: Ու Օտանին բաղադրական հայացքները հանրաձայնօթ էին: Տառնան Արթին խորհրդականն էր Մահմուտ Նեզիմ փաշային, որ Սուլթան Աղիզին օրով ազդեցիկ սաղաւզաձի էր, և այս սուլթանին իշխանութեանը միջոցն ալ՝ ներքին գործերու նախարար:

Հայ պաշտօնատարները երկրին վարչութեան մէջ կամաց-կամաց ինչպան կարելի է շատ հայերի կը տեսնուէին: Վահան էֆենտի (տիւրքի Տիւսար գրագէտին եղբայրը) նշանաւոր խորհրդականի կարեւոր պաշտօնին մէջ գտնուելով, բազմաթիւ հայեր լցուց դատարաններում մէջ, առանց ձան ձուն հանելու, առանց աղմուկի. թէև իր պաշտօնատան մէջ հայեւոր խօսող հայուն դէմ բարկութիւն ձեռնարկով, կը պահանջէր որ միայն թրքերէն խօսի իրեն հետ: Յակոբ փաշան, սուլթանին անձնական կալուածներուն մէջ, հայոց շատ պաշտօններ տուաւ, իրեն երկրաշափ, իրեն երկրագործական տեսուչ, իրեն վարիչ, իրեն գրագիր,

ժամանակ մեծ վտանգ կայ, որ կը ծագի համաեւրոպական պատերազմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԻԲԱՐԱՅԷԼԻՑ

Փետրվարի 7-ին

Ամառը, երբ խաշնարած թուրքերը իրանց հօտերով սար են բարձրանում, Արաքսի հովիտը պարսիկ աւազակների համար ճանապարհ կտրելու ազատ, ընդարձակ ասպարէզ է դառնում:

Անցած յունվար ամսում երկու դէպք տեղի ունեցաւ մեր գաւառում. մէկը Դաշալ թուրքաբնակ գիւղում, Զիբարայէլից 10 վերստ հեռաւորութեան վրա, իսկ միւսը Թումասում, 20 վերստի վրա:

Առաջին դէպքում աւազակները գիւղերով անցնում գալիս են Դաշալ գիւղը տանուէրի օգնականի բակը, կանչում դուրս են բերում տանուէրին և հրամայում ցոյց տալ մի թուրքի տուն, որին նրանք անուանում են: Տեղ հասնելով տանուէրի օգնականը, աւազակները հրամանով, կանչում է տանուէրի և պատուիրում, որ շուտ վերկենայ տունը պատրաստէ, պատճառ բերելով, որ դաւաճապետը անժամանակ գործով գալիս է ու այդտեղ պիտի լընէ: Գաւառապետի անունը լսելուն պէս տանուէրը նախ և առաջ թագնում է ունեցած զէնքերը, ապա բացում է դուռը: Աւազակները իսկոյն ներս խուժելով պատուիրում են ձայն ծագտուն չը հանել և բերելով տանուիրով եօթ ուղտը՝ բռնում են տան եղած-չեղած ու շորհակալութիւն անելով հեռանում:

Երկրորդ դէպքը պատահում է օր ցերեկով: Այս անգամ 12 հոգուց բաղկացած խումբը վստահ կերպով գտնում է դէպի Թումաս, որը ամուր գիւղ ունի: Երանց անցնելու մասին իմաց են տալիս գաւառապետ պ. Գարինին: Սա վերցնելով իր հետ երրորդ մասի պրիստաին, Զիբարայէլի հասարակութեան տանուէրին, որը մի քաջ տղամարդ է և բաւականաթիւ ստորաժնիկներ, ընկնում է աւազակների յետեւից: Օգնութեան է դնում նաև սահմանապահ օֆիցէրներից մէկը իր զինուորներով: Արեւ դեռ մայր չը մտած նրանք հասնում են աւազակներին թումասցիների հետ կուռի բռնված և իրանցից մի զոհ տուած: Տեսնելով

իրեն այս, իբրև այն: Տառնան Արթին փաշայ՝ արտաքին նախարարութեան խորհրդական՝ հետզհետէ հայեր գետեղեց դեսպանատունները, հիւպատոսարանները:

Մասնաւորապէս արտաքին գործերու պաշտօնատունն էր որ տեսակ մը հայաւան դարձած էր. և այդ պաշտօնատունը—խաբիճէ—և կանոնաւոր վարչութիւնը կը ներկայացնէր թիւրքերի պետական սպասարկութեանց մէջ: Յետոյ, Գազէլ Յակոբ փաշան սուլթանին անձնական գանձը բարեկարգեց, եւրոպական նախանձնիկ դրութեամբ:

Այս բոլոր առաւելութիւնները հետզհետէ մենէ կը խլուին: Մեր կորուստները պէտք է վերագրենք երկու նորութեանց: Մէկ կողմէն թիւրքերուն հետ հայկական յարաբերութիւնները վատթարացան. միւս կողմէն թիւրքերը իրենք զարգացան:

Հայը՝ ծագումով ասիացի, թիւրքին հետ բանի մը դարու կենսակցութեամբ անոր հոգեբանութեանը բաշխման, ու միանգամայն զարգացական-ազգային բարձր գաղափար մը տածելու կասկած չը տալով, բնականաբար էս վստահելի ցեղը երեցաւ: Սակայն 1879-էն ի վեր, թիւրքերը մեր վրայ այդ վստահութիւնը կորոնցնելով, այժմ մեզի կը նկատեն իբր իրենց դիւրբի միջամտի. հետեւաբար իրենց պաշտօնատուններն ալ հայոց առջև կամաց-կամաց կը փակեն:

Ու կէս դարու մէջ թիւրքերն ալ շատ մարդ պատրաստեցին: Արդի սուլթանը թիւրքերուն հանրային կրթութեանը շատ ուժ տուաւ. թէ Պօլիս, թէ նահանգները բազմաթիւ նոր դպրոցներ հիմնարկեց, և արդէն հաստատուած

